ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

04.04.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2019/16-2-ԵՊԲՀ-2>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան <<____>>_____ 20____թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Էսզեթ ֆարմա>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ե. Սարգսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 04.04.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2019/16-2-ԵՊԲՀ-2>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, <<Էսզեթ ֆարմա>> ՍՊԸ-ի կողմից 12.04.2019թ.-ին ներկայացրած թիվ 25 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 04.04.2019թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2019/16-2-ԵՊԲՀ-2>> գնման պայմանագրի՝ թիվ 1-ին, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ չափաբաժինների մասով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել 25 օրացույցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ	**<<Էսզեթ ֆարմա>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**ք. Երևան, Տիգրան Մեծի փ. 63/23**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	**<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ**
Հ/Հ 11500166513800	**Հ/Հ 1930000521940100**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 00433863**
	էլ. հասցեն szpharma@yahoo.com
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Տնօրեն՝ Ե. Սարգսյան**
_____	_____
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2019.04.23 16:48:53 AMST	Digitally signed by SARGSYAN YEREM 1101770244 Date: 2019.04.22 14:10:33 GMT+04:00